վազեր և տեղափոխեր · վեմ մի կարմրագոյն բլրա-
հասակ փրթուցեալ 'ի բարձանց լերինն, և թափ ընդ
թափ հոլովեալ ձուլեալ ընդ քարինս և ընդ սառոյցս՝
գահավիժեալ անկանէր կիսով յորկորս վէրին մեծի,
և կիսով խոնարհագոյն ևս թաւալ առեալ՝ զմասն մի
վանաց Ս · Յակովբայ և զնորին աղբեր հարեալ՝ կոր-
զեալ արկանէր 'ի վերայ գեղջն Ակուռայ, և նոքիմբք
զգիւղն կործանեալ աւերեր ջնջէր հետախաղաղ առ-
նէր · տամբք և ընտանեօք և սատցուածովք կորու-
սեալ զտեղին, և զառ սորուն նորին տաւաղեալ վրա-
նաբնակ Քուրդս, յորոց սակաւք ոմանք կարացին
անձնապուրծ լինել · և ծուխ հրախառն փոթորկեալ
զհետ մեծի թաւալոցին՝ ճարակեաց թիւացոյց զմա-
ցուածս շինին և ծառաստանին, և ծածկեաց ոգեղծ
աւերածովք · որք յետ ամսօրեայ աւուրց ('ի 24 յու-
լիսի) քայքայեալք սորսորեցան իջին 'ի խոնարհ 'ի
դաշտավայրսն, վարեալք 'ի հեղեղեալ քարանց զեր-
ծելոց և 'ի սկսեալն հոսանաց կաւոյ և աղմոյ · յո-
րոց դարձեալ ոչ սակաւ աւերմունք եղեն · և ցարդ
նշմարին ողորմելի մնացուածք գեղջն և մենաստանին
մասամբ 'ի տղմի խրեալք և մասամբ 'ի խառնակոյտս
անկերպարանս, և մեծագոյն ևս մասամբ՝ անհետա-
ցեալք : Բայց առ յիշատակ գեղջն հնոյ կանգնե-
ցաւ Ն·որ Ա·ռ·ա·ջ 'ի սորոսոս լերինն, և բնակեցաւ
'ի Հայոց իբր 180 տանց : — Գագաթն լերինն 'ի հան-
դարտութեան օգոյ՝ մառախլապատ տեսանի, իսկ 'ի
ընդել 'ի նմա հողմոց՝ պարզ և սպիտակափառ և պաղ-
պաջուն փայլէ վսեմահայեաց · բայց և հողմքն և մա-
ռախուղք, և սառամանիք նորին և ապալեր ուղղա-
բերձ կողք և աւազն սահգնեաց, և ամարանի հե-
ղեղք ձիւնահալ հոսանաց, և փրթածք հիւսոյ, գը-
ժուարինս և վանդաւորս գործեն զելս լերինն, և
գրեալթէ անմատոյց՝ զորբազան գագաթինն զասպը-
ջական տապանին · յոր նախ առաջին առ մեաք յամին
1829 յիններորդում աւուր ամսեան հոկտեմբերի էլ
գիտուն բնախոյզն Բարրոդ Գերմանացի ընդ ֆէռ-
սորովի չափաբերի և այլոց ոմանց, և եռես բլուրս
երիս սառամանեաց 'ի վերոյ քան զպատառածն մեծ,
և 'ի գագաթան տեղւոջն տափարակ իբր 200 քայ-
լիս չքնապատաւ, ուստի երևէին համօրէն Այրարատ
և կողմանք Սիւնեաց · անդ կանգնեաց խաչ փոքր, և
խաչ մեծ 'ի սորս՝ յառաջին ելան · յետ նորա ելին
և այլ բնագէտք 'ի զանազան նուագս և հաւատեալ
ստուգեցին զքննութիւնս Բարրոդեանց : — Փոքրն Մա-
սիս որ կոնաձև ևս քան զԱրագն ամբառնայ ց'9560'
յերեսաց դաշտին Երասխայ, յամարան զերծանի 'ի
ձեռանց, և գիւրելանելի է, թեպէտ և աւազուտ և
սա · 'ի գագաթանն ունի լճակ ըստ օրինի հրաբը-
խաց, և եղերքն քարախիթք · իսկ 'ի տեղւոջ ստափ-
րակի վէմք մեծամեծք թաւալեալք կան, զորս Օշ-ի
կամ Հսկայից գերեզմանս ասեն լինել : Ի լեռնագաշտի
կցուածոյ կրկին լերանցն կարծի յամանց նիստ տապա-
նին : Ի հարաւոյ կուսէ խառնին ոտք Մասեաց ընդ
լերինս Պայէզիտոյ, յարևմտից ընդ լերինսն որ սահման
հատանեն ընդ գաւառս Պայէզիտոյ և Սուրմարոյ, և
երթեալ կցին ընդ Բարգոլայ · համօրէն լեռնագաշ-
տակքն բերեն զհրաբուխ երկրի կերպարանս, սպրն-
գաքարիւք և լաւաքարիւք, որք յաճախագոյն ևս գը-
տանին 'ի հիւսիսային կողս լերինն, մանաւանդ առ
ակամբք Սեաւ Ջրոյն ուր և մորավայրքն են, և բազմու-
թիւն ջրասեր հաւուց : Հաւուցս վայրենեաց և որ-
սականաց առատութիւն է և 'ի սորոսոս լերինն, ուր
և որսան բազայիւք · իսկ ջրքոտանիք չեն առատ 'ի
Մասիս, 'ի գազանաց՝ երևի երբեմն և յոմազ · նուա-
զեալ է և բուսաբերութեամբ · ծառք սակաւք են 'ի
նմա և գոտանին ցբարձրութիւն 7800–8000 ոտից ·
անտի և 'ի վեր ալպեան բոյսք որք ժամանեն ց'12000',
և ազգք ինչ ց'13000' : Առ ակամբք գեղոյդ յիշելոյ 'ի
սահմանս Արկուռայ՝ եղեալ Արտաւազդն արքայի յորս
կընձիկ և ցուռ՝ խարդաւանեցաւ 'ի վիհն · լեռնա-
կոհակն այն կոչէր առ հինն Գինոյ լեառն կամ Բլուր
և գեան Գինեգոյն, թուի թէ 'ի յիշատակ գինւոյն
նոցի : — Ի հիւսիսային Մասեաց ոտին կան գեղքն
Սիրպաշան, Արաւլի, Հասանապա, և այլն :

138 · Գ · ՋԻՆԿԻ-ՊԱՋԱՐ գաւառ փոքր, այլ
նշանաւոր՝ զմայրաքաղաքն նահանգին Հայոց յինքեան
ունելով · կայ յելից Երասխայ հանդէպ Մասեաց Ո-
տին և Սեաւ Ջրոյ, 'ի հիւսիսոյ ունի զդաշտն Վա-
զարշապատու և զգաւառն Կէօք-չայ, յարևելից զլե-
ռինս Գեղամայ, 'ի հարաւոյ զՇարուր գաւառ · և
այսպէս կոչի յանուն Ջինկի գեղոյ, որ է Հրազդան
ըստ նախնեաց, և է ԿՈՏԱՅՔ գաւառ հին · հարա-
ւակողմն գաւառիս կոչի ԳԱՌՆԻ-ՊԱՋԱՐ յանուն գառ-
նոյ գեղջ, որ և մասն է Գեղաքունի գաւառի Սիւ-
նեաց · հիւսիսակողմն ԳԸՐԳ-ՊՈՒԼԱԳ, վասն բազում
աղբերցն ականց որ 'ի լերանց Գեղամայ իջեալ՝ ա-
ռու գործեն և խաղան յելից Երեւանայ : Միանգա-
մայն 100 գեօղք են երեցուն վիճակաց · յորոց 'ի
ծայր արևմտից հիւսիսոյ կայ մայրաքաղաքն ԵՐԵՒԱՆ
յահեկէ Հրազդանայ և Գըրգսղուլագայ, յարևելից
առաջնոյն, 'ի բարձու 2970' ոտից 'ի սարահարթի
Հրազդանայ · աւան էր 'ի հնումն հին, այլ շինողն
անյայտ · յԸ դարէ և այսր անկեալ ընդ իշխանու-
թեամբ Հագարացւոց, Պարսից և Օսմանեանց, և
իշխանանիստ լեալ, 'ի դարէ հետէ կայր 'ի ձեռս
Պարսից՝ որոց իշխան 'ի սմա սարտար կոչէր, և յե-
տին սարտարն բազում շինութիւնս արար 'ի սմա ·
Ուստ նուաճեցին յամին 1827, 'ի ձեռն Բասդե-
փիշի որ և կոչեցաւ Երեւանեան · յամին 1841 կար-
գեցին մայրաքաղաք կուսակալութեան համօրէն Հայ-
կական Նահանգի, նորոգեալ զամրոցն որ 'ի հարա-
ւակողմն քաղաքին, ուր և գեղեակ կուսակալին՝ եր-
բեմն սարտարին Երեւանայ, և ապարանք աւագ որե-
լոյ, և կամուրջ 'ի վերայ գետոյն : Բայց քաղաքն
գծուծ է տեսլեամբ, և մասամբ հողակերտ · հինգ
թաղք են նորա և վեցերորդ Նոր-թաղ շինեալ 'ի
գաղթականէն Հայոց, յորում է հին եկեղեցին սուրբ
երկրեայ մատրամբ շիրմի Ս · առաքելոյն Ստեփանոսի,
են և այլոց թաղից եկեղեցիք · և շուկայ մի մեծ ա-
ղեւսեայ կամարօք, և մզկիթ յախճապակազարդ, և
վարժարան նոր վասն մանկուց ամենայն ազգաց բը-
նակաց քաղաքին, որ են 20,000 ոգիք, յորս Հայք
իբրև 6000, այլքն մահմետականք և Ռուսք : Ի Ձ-
ւրագեղ թաղն կայր աշտարակ մի հին և վայելուչ՝